ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-412-17.10.2022-ՏՀ-011/0) ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-412[1]-17.10.2022-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Կ-412-17.10.2022-ՏՀ-011/0)					
1.	ՀՀ կառավարություն	Նախագիծ	Առաջարկում ենք վերանայել նախագծի հոդվածների համարակալումը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-5-րդ հոդվածներ	Նախագծի փոփոխվող հոդվածների համարակալումից առաջ առաջարկում ենք լրացնել «Օրենսգրքի» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Հիմք ընդունելով Սահմանադրության 11-րդ և 59-րդ հոդվածները՝ Նախագծի 2-րդ հոդվածով Օրենսգրքի 26-րդ հոդվածում լրացվող 5-րդ մասից առաջարկում ենք հանել «կամ կառավարության կողմից» բառերը, հաշվի առնելով որ բոլոր	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			դեպքերում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքը կամ իրավունքի սահմանափակումը կարող է նախատեսված լինել կամ Սահմանադրությամբ, կամ օրենքով, կամ միջազգային պայմանագրով, այլ ոչ թե այլ իրավական ակտով: Այլ նորմատիվ, ինչպես նաեւ անհատական իրավական ակտերով չեն կարող ամրագրվել կամ սահմանվել իրավունքներ կամ իրավունքի սահմանափակումներ		
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Իրավական տեխնիկայի կանոնները պահպանելու նպատակով նախագծի 3-րդ հոդվածում համարակալումն առաջարկում ենք սկսել առաջին նախադասությունից՝ «30-րդ» թվից առաջ լրացնելով «1)» թիվը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասով առաջարկվող՝ Օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով լրացվող 9-րդ և 10-րդ կետերում «կրկնվելու դեպքում» բառերն առաջարկում ենք փոխարինել «կրկնվել է» բառերով, որպեսզի դրանք համապատասխանեն Օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի բովանդակությանը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
6.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկվող՝ Օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով լրացվող 10-րդ կետում «GPS» հապավումն առաջարկում նեք փոխարինել «ՋիՊիէս (Գլոբալ Տեղորոշման Համակարգ, այսուհետ՝ GPS)» բառերով, հիմք ընդունելով	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 10-րդ հոդվածի պահանջը:		
«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Կ-412[1]-17.10.2022-ՏՀ-011/0)					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 60.[1]-ին հոդվածում լրացվող իրավախախտում սահմանող պարբերությունները դրանց համար պատասխանատվություն սահմանող պարբերությունների հետ համապատասխանեցնելու նպատակով Նախագծի 1-ին հոդվածի 1-ին պարբերության վերջին տողում «արդյունահանելու դեպքում» բառերն առաջարկում ենք փոխարինել «արդյունահանելը» բառով, իսկ նախավերջին պարբերության վերջին տողում «իրականացնելու դեպքում» բառերը՝ «իրականացնելը» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «GPS» հապավումն առաջարկում ենք փոխարինել «ՋիՊիէս (Գլոբալ Տեղորոշման Համակարգ, GPS)» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 10-րդ հոդվածի պահանջը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: